ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐՃ ՊՈՒՇՅԱՆՅԻՆ՝ ԻՐ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԻՆ

Այնտեղ ծնված ու մեծացած,
Ուր դարեվոր վըշտերն հայի
Ծանր ու մռայլ կան լեռնացած,
Ինչպես Մասիսն այն վիթխարի։

Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ
Ազգի վերքերն ողբերգողին,
Քառասուն տարի ձեռքիդ գըրիչ,
Անցար, բռնած նորա ուղին։

Հայ գյուղացին ցավեր ուներ
Խեղդված իրան խուլ խրճիթում,
Այն ցավերին լեզու տըվիր
Ու խոսեցրիր ամեն սըրտում։

Այդ սրբազան գործի համար,
Այժմ ահա, ծեր օրերիդ,
Մենք գալիս ենք երախտապարտ
Պըսակ դընել ալիքներիդ։

Եվ թող ապրի անմահ փառքով,
Ով որ ցավը թույլ թըշվառի
Կարեկցության հզոր խոսքով
Դարձնում է ցավն իր աշխարհի։